



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

27.06.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/13

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2017թ. թիվ 03/73-3/9403-17 գրությամբ «Շինարար-97» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 20.05.2017թ. թիվ 01/61-9038 գրության հիման վրա, 29.05.2017թ. թիվ 03/73-3/9403-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Շինարար-97» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Շինարար-97» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Շինարար-97» ՍՊԸ-ն 29.05.2017թ. գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած «Շինարար-97» ՍՊԸ-ն հայտ ներկայացնելու օրվա՝ 05.05.2017թ. դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ և ի հավաստումն նշված փաստի՝ կից ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.05.2017թ. տրամադրված թիվ 1223 տեղեկանքը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 20.05.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. Երևանի քաղապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 20.05.2017թ. թիվ 01/61-9038 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84» ծածկագրով ընթացակարգի 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Շինարար-97» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, 06.05.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 11.05.2017թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի՝ «Շինարար-97» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ 107 316.0 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 20.05.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/13 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/13 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար համար կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Շինարար-97» ՍՊԸ-ն **05.05.2017թ.** հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ «Շինարար-97» ՍՊԸ-ն ճանաչվել է 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտներին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 06.05.2017թ. հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Շինարար-97» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.05.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը **05.05.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 107 316 ՀՀ դրամի չափով:**

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Շինարար-97» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

6. Ընկերությունը հորհրդին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից 20.05.2017թ. տրամադրված թիվ 1223 տեղեկանքը, համաձայն որի **«Շինարար-97» ՍՊԸ-ն 05.05.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:**

7. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 06.06.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/10161-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով հայտնել, թե «Շինարար-97» ՍՊԸ-ն 05.05.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ:

8. Ի պատասխան հորհրդի 06.06.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/10161-17 գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 15.06.2017թ. թիվ 1/6-1/20972-17 գրությամբ հայտնել է, որ **«Շինարար-97» ՍՊԸ-ն 05.05.2017թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:**

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2017թ. թիվ 03/73-3/9403-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 20.05.2017թ. թիվ 01/61-9038 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից 20.05.2017թ. տրամադրված թիվ 1223

տեղեկանքը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 15.06.2017թ. թիվ 1/6-1/20972-17 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի արկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության

չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Շինարար-97» ՍՊԸ-ն 05.05.2017թ. մասնակցության ի հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84» ծածկագրով ընթացակարգին:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտներին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 06.05.2017թ. հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Շինարար-97» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.05.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը **05.05.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 107 316 ՀՀ դրամի չափով:**

Միևնույն ժամանակ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից 20.05.2017թ. տրամադրված թիվ 1223 տեղեկանքը, համաձայն որի «Շինարար-97» ՍՊԸ-ն 05.05.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, որը հաստատվել է նաև՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 15.06.2017թ. թիվ 1/6-1/20972-17 գրությամբ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից 20.05.2017թ. տրամադրված թիվ 1223 տեղեկանքը և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 15.06.2017թ. թիվ 1/6-1/20972-17 գրությունը՝ համաձայն որոնց Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ «Շինարար-97» ՍՊԸ-ն թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտումը, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2017թ. թիվ 03/73-3/9403-17 գրությամբ «Շինարար-97» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05510886) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական
կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ